


Մանուկներու Սուրբ Գիրքը  
կը ներկայացնէ



Իմաստուն  
Սողոմոն  
Թագաւորը



Written by: Edward Hughes

Illustrated by: Lazarus

Adapted by: Ruth Klassen

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation

has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

[www.M1914.org](http://www.M1914.org)

©2013 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,

as long as you do not sell it.



Դաւիթ թագաւոր  
Աստուծոյ մեծ մարդն էր:



Իր թագաւորութեան ատեն Իսրայել  
տասն անգամ ակելի մեծցած էր ...




... քան Սաուլի թագաւորութեան  
ընթացքին:



Ան այլեւս չէր կրնար կառավարել:  
Դաւիթ ծերացած էր եւ յոգնած էւ  
հիւանդ, ...



... իր կեանքը աշխարհի վրայ  
այլեւս կը հասնի իր աւարտին:





Դաւիթի  
տղոցմէ,  
Ադոնիա,  
Իսրայէլի  
ժողովուրդին  
ըսաւ, որ հիմա  
ինք թագաւոր  
պիտի ըլլայ:







Թեև իր  
անունը "Իմ  
Տերս Աստուածն  
Է" կը նշանակէ,  
Ադոնիա բարի  
մարդ մը չէր:








Ան փորձեց  
գահը գողնալ,  
գիտնալով, որ  
Դաւիթ շատ  
տկարացած էր եւ  
չէր կրնար զինք  
դիմադրել: Սակայն  
Աստուած տարբեր  
ծրագիրներ  
ունէր:




Դաւիթին  
կինը Բերսաբէ  
գիտէր, որ իր  
տղան Սողոմոնը  
թագաւոր պետք  
է որ ըլլայ: Ան  
Դաւիթին պատմեց  
Ադոնիայի  
ծրագրին  
մասին:




Յիւանդ  
վիճակով Դաւիթ  
իր շուրջ հաւաքեց  
կառավարիչները  
եւ հանրութեան  
մէջ Սողոմոնը  
թագաւոր  
հռչակեց  
Իսրայէլի  
վրայ:




Սողոմոնն այլևս որեւէ մէկ հարց  
չունէր Ադոնիա հետ, որովհետեւ  
Իսրայէլի ժողովուրդը կը  
հաւատար Ռաւիթի:




Դաւիթ ըսաւ, որ Սողոմոն  
ընտրուած էր Աստուծմէ ըլլալու  
համար իրենց վրայ թագաւոր:  
Կարճ ժամանակ ետք Դաւիթ  
մահացաւ:





Նախքան մեռնիլը  
Դաւիթ խօսեցաւ  
Սողոմոնի, որ  
ինչպէս պետք  
էր ան հնազանդի  
Աստուծոյ եւ ըլլար  
բարի թագաւոր:






"Աստուծոյ ճամբով  
քալէ, որպէսզի  
զարգանաս ամէն  
ինչի մէջ, որ կ'ուզես  
ընել", ըսաւ Դաւիթ  
իր տղուն:







Այդ լաւ խրատ էր,  
եսքը Սողոմոն  
նստաւ իր հօր  
գահին վրայ եւ իր  
թագաւորութիւնը  
հիմնուեցաւ  
ամուր հիմերու  
վրայ:



Երեկոյ մը Սողոմոն երազ  
մը տեսաւ: Իր  
երազին մէջ  
Աստուած  
երեւցաւ  
իրեն եւ  
ըսաւ.



"Ուզէ՛, ինչ որ կ'ուզես, որ տամ  
քեզի": "Ի՞նչ կրնայի  
պահանջած  
ըլլալ":



Սողոմոն խնդրեց իմաստութիւն,  
որպէսզի ըլլայ լաւ  
թագաւոր:



Այս երիտասարդ թագաւորին  
խնդրանքը գոհ  
պահեց  
Աստուծոյ:



Սողոմոն առաւ  
այն ինչ որ  
խնդրած  
էր, ...



... սակայն Աստուած անոր  
խոստացաւ մեծ  
հարստութիւն  
ել պատիւ:



Շատ երկար ժամանակ չանցավ  
երբ ժողովուրդը նկատեց Սողոմոնի  
իմաստութիւնը: Օր մը երկու  
մայրեր եկան իր մօտ,  
մէկը մանուկով մը:






"Այս կնկան տղան մեռաւ  
երեկոյեան եւ ան իր մեռած  
մանուկը իմ ողջ մանուկովս  
փոխարինեց", ըսաւ  
կիներէն մին:



"Ո՛չ: Բայց ողջը իմ տղաս է, եւ  
մեռածը քուկդ", ըսաւ միւսը:  
Ի՞նչպէս կրնար թագաւորը  
գիտնալ, թէ ո՞ր մայրը  
իրականութիւնը  
կ'ըսէր:



Ետքը թագաւորը ըսաւ. "Սուր մը  
բերէք ինձի": Եւ անոնք սուր մը  
բերին թագաւորին: Ի՞նչ կը կարծես,  
որ թագաւորը  
կը ծրագրէր  
ընել  
սուրոյ:



Եւ թագաւորը ըսաւ. "Բաժնեցէք  
ապրող մանչուկը երկուքի եւ մէկ  
կէսը տուէք մէկուն, իսկ միւս կէսը  
միւս կնկան":



Ողջ տղուն մայրը ըսաւ. "Ով տէր իմ,  
իրեն տուր ապրող մանչուկը եւ  
է՛րևայ զինք մեռցնես":



Բայց միև  
կինը ըսաւ.



"Թող ո՛չ ինձի, ո՛չ  
ալ քեզի ըլլայ, ...



... բայց թող  
բաժնենք  
պզտիկը”:







Ուրեմն  
թագաւորը ըսաւ.  
"Առաջին կնկան  
տուէք պզտիկը:  
Ան է մայրը":





ԵՆ ամբողջ  
Իսրայելը լսեց այդ  
դատողութեան  
մասին, եւ  
շատ բարձր  
գնահատեցին  
ու յարգեցին  
Թագաւորը:






Անոք տեսան,  
որ Աստուծոյ  
իմաստութիւնը  
անոր մէջն է:






Իսրայելի ժողովուրդը  
տաճար չունէր, որուն  
մէջ պաշտէր Աստուծոյ:  
Երբ Դաւիթ ծրագրեց  
կառուցել



Աստուած  
ըսաւ.




"Քո՛ւ որդիդ պիտի  
կառուցէ տունս իմ  
անունիս համար",  
ուրեմն Սողոմոն սկսաւ  
կառուցել




սքանչելի  
տաճար մը  
Երուսաղէմի մէջ:




Եօթը երկար  
տարիներ  
տեւեցին  
տաճարի  
շինութիւնը:



Բայց եկաւ  
այն մեծ օրը,  
ուր ամենքը  
ժողուած  
ունկնդրեցին



Սողոմոնի  
նուիրումը այս  
տաճարին տիրոջը:



Սքանչելի  
աղօթք  
մը ետք,



Թագաւորը  
եւ ժողովուրդը  
ուրախութեամբ  
հազարաւոր զոտեր ...






... մատուցեցին  
եւ մեծ



Խրախճանք  
մը սարքեցին երկու  
շաբթուան վրայ:



Այսպէ

ետք, Աստուած

երեւցաւ անգամ

մը եւս Սողոմոնի եւ

խոստացաւ

զինք օրհնել եւ


Իսրայելը այնքան

ատեն որ անոնք Տիրոջ

կը հնազանդէին:



Դժբախտաբար ոչ Սողոմոնն էլ  
ոչ ալ ժողովուրդը տեւական  
կը հնազանդէին Աստուծոյ:  
Թագաւորը ամուսնացաւ  
շատ մը կիներու հետ, որոնց  
Աստուած չէր  
ուզեր:




Անոր հեթանոս, կիները անոր  
սիրտը դեպի կուռքերուն  
դարձուցին, եւ իր սիրտը  
հաւատարիմ չեղաւ Տիրոջ  
իր Աստուծոյ, ինչպէս  
որ էր իր հօր  
Դաւիթի  
սիրտը:



Երբ Սողոմոն սպասեց իր առիթը  
հնազանդելու Աստուծոյ Յերոբովամ  
իւր սպաներէն մէկը տարօրինակ  
բացատրութիւն մը  
ունեցաւ:



Մարգարէ մը անոր ըսաւ, որ  
Աստուած պիտի բաժնէ Սողոմոնի  
թագաւորութիւնը եւ Յերոբոսամ  
պիտի իշխէ  
տասներկուքէն




տապը տոհմերուն  
վրայ:



Յերոբովամ շուտով Եգիպտոս  
փախաւ: Ան գիտցաւ, թէ Սողոմոն  
պիտի մեռցնէ իրեն  
եթէ մնար:






Վերջապես  
Սողոմոն  
մահացաւ:  
Իր որդին,  
Ռոբովամ  
տուրքի  
ենթարկեց  
ժողովուրդը  
աւելի քան  
իր հայրը:








Տասը տոհմեր  
ըմբոստացան  
եւ Յերոբովամ  
ընտրեցին  
իբր իրենց  
առաջնորդ:






Սողոմոնի հզօր  
թագաւորութիւնը  
բաժնուեցաւ  
երկուքի, ճիշդ  
ինչպէս որ  
Աստուծոյ  
մարգարէն  
ըսած էր:



Աստուած  
չէր կրնար օրհնել  
անհնազանդութիւնը:



Իմաստուն Սողոմոն թագաւորը

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,  
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

1 Թագաւորաց 1 - 12

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"  
Մաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:



Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը  
ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը  
հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի  
համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի:  
Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես  
բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր  
կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ,  
յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի  
համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն  
օր Աստուծոյ հետ խօսիր:  
Յովհաննու 3:16

